ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԻ
(կյանքը եւ գործունեությունը)

Հայ իրականության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի Բարձր Հայքի Եկեղյաց գավառը՝ իր Երզնկա կենտրոնով եւ իմաստասիրական-գրական բեղուն դպրոցով[1], որի առավել նշանավոր սաները՝ Կոստանդին, Հովհաննես Պլուզ, Հովհաննես Ծործորեցի, Մովսես, Գրիգորիս, Մխիթար եւ Գեւորգ երզնկացիներն իրենց բազմաբնույթ գրվածքներով եւ բուռն գործունեությամբ կերտեցին այդ փառքը՝ մնայուն եւ անգնահատելի ավանդ ու նպաստ բերելով մատենագրության, մշակույթի, արվեստի եւ գիտության տարբեր ճյուղերի ծաղկմանն ու բարգավաճմանը: Այս միջավայրի ծնունդ եւ նվիրյալների փաղանգից է ԺԳ.-ԺԴ. դդ. բանիմաց եւ խորագետ, ազգային, եկեղեցական եւ հասարակական գործիչ Կիրակոս վրդ. Երզնկացին († 1355)՝ մատենագիր, աստվածաբան, մեկնիչ, փիլիսոփա, շարականագիր, տաղասաց, մանկավարժ, տոմարագետ եւ բաբունապետ, որի մասին մեծ գովեստով եւ պատկառանքով են արտահայտվում ձեռագրերի գրիչները՝ նրան անվանելով «մեծ եւ հռչակաւոր վարդապետ»[2], «արժանաւորն ամենայն գովեստի եւ յիշման»[3], «զերանաշնորհ, եռամեծ բաբունապետ»[4], «կայծակնամաքուր վարդապետաց վարդապետ»[5], «զերիցս երանեալ բաբունապետ»[6], ու «զերջանիկ եւ զանհուն վարդապետ»[7]: Իսկ Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր Աստվածաշունչ մատյաններից մեկում, որի ստացողը հենց Կիրակոս բաբունին է, անանուն գրիչն Աստծուն խնդրում է պահպանել նաեւ «զսուրբ բաբու-

1 Երզնկայի մասին տես **Յ. Քիւրտեան**, Երիզա եւ Եկեղեաց գաւառ, Ա. հատ., Վենետիկ-Ս. Ղազար, 1953, էջ 5-314, **Գառնիկ Ստեփանյան**, Երզնկա. հնագույն դարերից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2005, էջ 5-665:

2 «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 212:

3 Անդ:

4 Անդ, էջ 332:

5 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. Ամ 1379, 1334 թ., էջ 271բ:

6 Տես «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Դ., Երուսաղէմ, 1969, էջ 384:

7 ՄՄ ձեռ. Ամ 1379, էջ 354բ:

նապետն Կիրակոս»[8], որն անկասկած խոսում է Կիրակոս վարդապետի սրբակենցաղության եւ արդեն իսկ իր կենդանության ժամանակ վայելած հարգանքի եւ հռչակի մասին: Ինչպես ցույց է տալիս Կիրակոս Երզնկացու մատենագրական ժառանգության ուսումնասիրությունը, Հայոց Եկեղեցու նվիրյալ այս զավակի համբավը տարածված է եղել ոչ միայն իր հայրենի գավառում, այլ նաեւ նրա սահմաններից դուրս: Ուստի պատահական չէ, որ մարդիկ իրենց հուզող զանազան խնդիրներով դիմել են նրան՝ հայցելով այս «քաջ հովի» հոգեւոր խնամքն ու խորհուրդը, նրա ցուցումներն ու բացատրությունները հատկապես հոգեւոր տարբեր հարցերի շուրջ: Եւ Կիրակոսը, բնականաբար, Աստծուց իրեն շնորհված իմաստությամբ, Ս. Գրքի հոգեշունչ եւ ազդու խոսքով, հոգեմտավոր հարուստ փորձառությամբ, անտրտունջ, սիրով եւ ամենայն պատրաստակամությամբ խրատել է բոլորին, եւ մեր Եկեղեցու ուղղափառ դավանության դիտանկյունից մեկնել աստվածային ճշմարտությունները:

Չնայած ժամանակակիցների եւ հետագա դարերում Կիրակոս Երզնկացու գործերն ընդօրինակած գրիչների կողմից նրան ընծայված այս փառքին եւ ճանաչվածության՝ Կիրակոս րաբունապետի կյանքը, գործունեությունը եւ մատենագրական ժառանգությունը մինչեւ վերջերս մնում էին չուսումնասիրված եւ անհայտ հայագիտության եւ եկեղեցական լայն շրջանակներին: Նրա գրական վաստակով զբաղված եզակի հետազոտողներն առավելապես կենտրոնացել են այս րաբունապետի կենսագրության կամ բանասիրական ճշգրտումների եւ որոշ հարցերի վրա, որոնց պատճառով բաց է մնացել Կիրակոս Երզնկացու մատենագրական ժառանգության ամբողջական արժեւորումն ու գնահատումը: Մեզ համար մասնավոր հետաքրքրություն ունեն նրա երկերում արծարծված աստվածաբանական խնդիրներն ու դրանց լուծումները, որոնք հնարավորություն են ընձեռում ոչ միայն գնահատելու Կիրակոսին՝ իբրեւ աստվածաբանի եւ Եկեղեցու ուղղադավանության կրողի ու պաշտպանի, այլ նաեւ պատկերացում կազմելու դարաշրջանի աստվածաբանական մտածողության եւ հուզող հարցերի մասին: Ինչպես ժամանակին իրավամբ նկատել է բանասեր Արմենուհի Սրապյանը, «Կիրակոսի մասին եղած կարծիքները հակասական են առհասարակ՝ թէ՛ անձնաւորութեան, թէ՛ ապրած ժամանակաշրջանի եւ թէ՛ գրական ժառանգութեան որոշման եւ բնութագրման հարցերում: Դա հետեւանք է այն բանի, որ ԺԳ.-ԺԴ. դարերում յիշատակւում են մի քանի Կիրակոսներ: Նրանցից առանձնապէս նշանաւոր են Գանձակեցին, Արեւելցին եւ Երզնկացին: Երեքն էլ համարուել են բացարձակապէս ժամանակակից, եւ երեքն էլ վախճանուած 1271-1272 թուերին: Հայագէտներից ոմանք Կիրակոս Երզնկացուն հասցրել են մինչեւ ԺԵ. դարը»[9]: Կիրակոսների հետ կապված այս թնջուկն ավելի է խորացել, քանզի միջնադա-

---

8 ՄՄ ձեռ. Հմր 353, 1317 թ., էջ 662ա:

9 **Արմենուհի Սրապեան**, Կիրակոս Երզնկացի. բանասիրական ճշգրտումներ. «Բազմավէպ», 1993, էջ 183-184:

րից մեզ են հասել մի քանի երկեր եւ գործեր, որոնք ձեռագրերում պահպանվել են պարզապես «Կիրակոս վարդապետի» խորագրով՝ առանց հեղինակային պատկանելության հստակ զատորոշման: Այս խճճվածության պատճառներից մեկն էլ նրա երկերի մեծ մասի անտիպ լինելն էր, որոնց համակողմանի ուսումնասիրությունն օգնում է մեզ բացահայտել նրա կենսագրության եւ ժրաջան գործունեության որոշ դրվագներ, ինչպես նաեւ ճշգրտումներ կատարել դրանց վերաբերյալ: Եւ մեր առաջ հառնում է մի մատենագիր եւ անհատականություն, որն արժանի է գնահատանքի, իսկ նրա գործերը՝ ուսումնասիրման:

Ճիշտ է, գուցե Կիրակոս Երզնկացին իր աշխատությունների քանակով կամ բացառիկությամբ զիջում է իր նախորդներին, բայց մեզ հասած երկերը ցույց են տալիս, որ գործ ունենք բազմակողմանի զարգացած եւ լայն մտահորիզոն ու աշխարհայացք ունեցող մի հեղինակի հետ, որը քաջատեղյակ է ժամանակի աստվածաբանական եւ փիլիսոփայական մտքին, իրեն նախորդած նշանավոր վարդապետների եւ մատենագիրների երկերին, ժողովրդական իմաստությանն ու Եկեղեցում շրջանառված ավանդություններին: Յուրաքանչյուր երկի քննություն ցույց է տալիս հեղինակի քաջատեղյակությունը նյութին եւ մինչ այդ արտահայտված կարծիքներին: Չնայած այս ամենին, նա երբեք չի զլանում նաեւ իր սեփական մտածումներն արտահայտելու զանազան խնդիրների շուրջ, որոնք մատնանշում են նրա ինքնուրույնությունը եւ անհատական վերաբերմունքը: Սրանով է հենց հետաքրքիր այդ դարաշրջանի նշանավոր այս եկեղեցական գործիչը, քանզի նա ոչ միայն կարողացել է յուրացնել նախորդող հոգեւոր հարուստ ժառանգությունը, այլ նաեւ փորձել է անձնական իր ներդրումն ունենալ դրա մեջ: Ուստի նրա գրվածքներում շահեկան եւ հետաքրքիր տեղեկություններ կան գիտության զանազան բնագավառների մասին: Մեծ արժեք ունեն նրա աստվածաբանական, իմաստասիրական, ծիսական, բարոյախրատական, կրթադաստիարակչական, հասարակական-քաղաքական հայացքները հատկապես ժամանակի իրողությունների առավել ամբողջական ընկալման տեսանկյունից:

Կիրակոս ռաբունին հայտնի է նաեւ իր արդյունավետ գիտամանկավարժական գործունեությամբ: Լինելով հմուտ մանկավարժ եւ հոգեւոր դաստիարակ՝ նա ստեղծել է ուսուցման ինքնատիպ միջոցներ, որոնցով կրթել է իր սաների միտքն ու հոգին՝ անձնապես օրինակ դառնալով նրանց համար: Փաստորեն Կիրակոս ռաբունապետը շարունակել է Երզնկայի դպրոցի լավագույն ավանդներն ու վերջինիս նշանավոր ռաբունապետներ Հովհաննես Պլուզ († 1293) եւ Մովսես երզնկացիների († 1325) սկսած գործը: Նրա հայտնի աշակերտներից են իր եղբորորդի Հովհաննես վարդապետը, Գրիգոր աբեղան, Ստեփանոս երեցը, Մկրտիչ դպիրը եւ ուրիշներ, որոնք շնորհակալությամբ, երախտագիտությամբ եւ գովասանքով են արտահայտվում իրենց ուսուցչի մասին: Կիրակոսի՝ իբրեւ ականավոր ուսուցչի եւ ռաբունապետի մասին է վկայում 1334 թ. Երզնկայում գրված Մաշտոցյան Մատենադարանի 1379 թվահամարի ձեռագրի մանրան-

կարը, որում գահին՝ վարդապետական գավազանով նստած է Կիրակոս Երզնկացին, առջևում նրա սիրասուն երկու աշակերտներն են, որոնցից մեկն ընթերցում է բացված գիրքը՝ դասը[10]:

Կիրակոս Երզնկացու կյանքի եւ գործունեության մասին պահպանված տեղեկությունները սակավ են եւ կցկտուր, շատ հաճախ՝ հատվածական եւ ոչ լիարժեք: Դրանք հիմնականում սփռված են պարբեր ձեռագրերի ներածություններում եւ վերջաբաններում, հիշատակարաններում եւ հենց նրա աշխատություններում, որոնց օգնությամբ եւ հարակից տեղեկությունների հիման վրա պետք է փորձենք տալ Կիրակոս բաբունապետի անցած ճանապարհի նկարագիրը:

Կիրակոս վրդ. Երզնկացուն առաջին անգամ անդրադարձել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Միքայել վրդ. Չամչյանը (1738-1823) հայոց պատմությանը նվիրված իր կոթողային աշխատության մեջ՝ գրելով. «Այր սրբակրօն եւ հետամուտ իմաստութեան, որ արար բազում գրուածս խրատականս եւ բանս ոտանաւորաց, եւ ի խոր ծերութեան իւրում գրեաց թուղթ յորդորական՝ իբրեւ զքարոզ եւ կանոն խրատուց առ ամենայն հայս եւ մանաւանդ առ քահանայս՝ երկար եւ ճառօրէն, միջակ եւ աշխարհաբառ ոճով՝ առ ի դիւրահաս լինելոյ ամենեցուն»[11]: Այնուհետեւ Չամչյանը թվարկում է Կիրակոսի մի քանի աշխատություն[12]: Շեշտելու համար Կիրակոս բաբունու գրվածքների կարեւորությունը՝ նա հավելում է, որ դրանք հավաքվել են «Ոսկեփորիկ» կոչված ժողովածուի մեջ՝ անկասկած նկատի ունենալով Կիրակոսի երկերը ներառող եւ Վենետիկի Մխիթարյան միաբանության մայրավանքի ձեռագրատանն այժմ պահպանվող համանուն ժողովածուները:

Կիրակոս Երզնկացու կյանքին եւ մատենագրական ժառանգությանն անդրադարձել է նաեւ Հակոբ վրդ. Շագուրյանը՝ հրատարակելով նրա խրատական թղթերից մեկը, որը ոչ միայն կենսագրական տեղեկություններ է պարունակում հեղինակի մասին, այլեւ իր բնույթով կանոնական գրվածք է: Բայց նա էլ, անտեղյակ լինելով Կիրակոս բաբունու կենսագրության մանրամասներին եւ նոր տվյալներին, սխալվում է հեղինակի ծննդյան եւ մահվան թվականների հարցերում, որոնց պատճառով սխալ եզրակացությունների է հանգում իր հոդվածուսումնասիրության մեջ[13]:

10 ՄՄ ձեռ. Հմր 1379, էջ 160բ: Ձեռագիրս բովանդակում է Պողոս առաքյալի ԺԴ. թղթերի Ս. Հովհան Ոսկեբերանի (347-407) եւ Ս. Եփրեմ Ասորիի (306-373) մեկնությունը, որը դասավանդելու նպատակով իր աշակերտներին է հանձնարարել Կիրակոս բաբունին: Այս մասին հիշատակարաններից մեկում մասնավորապես ասվում է. «Եւ Տէր փացէ զզօրութիւն բաբունապետիս մերոյ՝ Կիրակոսի, որ ի խօթանասնեկի ի աւթն շրջապատեսցէ զգիրքս դասատուութեամբ առ բանի աշակերտեալ սպասաւորսն իւր». անդ, էջ 182բ: Մանրանկարում պատկերված է նաեւ Մկրտիչ վարդապետը: Անդրադառնալով այս մանրանկարի գեղարվեստական արժանիքին՝ հայագիտության երախտավոր եւ հայկական արվեստի գիտակ Գարեգին Հովսեփյանը նշում է, որ այն բարձր արվեստի գործ չէ. տե՛ս **Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 269:

11 **Միքայէլ Չամչեանց**, Հայոց Պատմութիւն, հ. Գ., Երեւան, 1984, էջ 508:

12 Տե՛ս անդ, էջ 508-509:

13 «Բազմավէպ», Վենետիկ, 1942, Յունուար-Դեկտեմբեր, էջ 52-, 57, բնագիրը՝ 1943, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 62-66:

Կիրակոս բաբունապետի մասին ցայսօր տպագրված հոդվածներում եւ ուսումնասիրություններում իր բովանդակությամբ եւ հաղորդած օգտակար տեղեկություններով առանձնանում է ամերակահայ հնահավաք եւ բանասեր Հարություն Քյուրտյանի (1901-1979) «Երիզա եւ Եկեղեաց գաւառ» աշխատությունը, որում նա Կիրակոս Երզնկացուն նվիրված հատվածում առկա ձեռագրական տվյալների հիման վրա առավել ամբողջական եւ հավաստի ուրվագծում է հայտնի այս վարդապետի անցած ուղին եւ հիշատակում նրա երկասիրությունների մեծ մասը[14]: Այնուհետեւ 1965 թ. նա ձեռագրական իր անձնական հավաքածուից դուրս է բերում եւ հրապարակում Կիրակոսի անտիպ տաղերը, որոնցից մեկում, բարեբախտաբար, պահպանվել են Կիրակոսի ծնողների անունները[15]:

Նույն ժամանակաշրջանում իրենց գործունեությունը ծավալած տարբեր Կիրակոսների տարբերակման, նրանց գրվածքների ճշգրտման եւ հատկապես Կիրակոս Երզնկացու կենսագրական որոշ նրբությունների լուսաբանման հարցում մեծ է բանասեր Արմենուհի Սրապյանի (1918-2000) ավանդը: Հրապարակի վրա եղած տվյալների համադրմամբ նա կարողացել է մատնանշել մեզ հետաքրքրող մատենագրի ապրած ժամանակաշրջանը եւ տալ որոշ հարցերի հստակ պատասխանները[16]:

Կիրակոս Երզնկացուն մասնակիորեն իրենց աշխատությունների շրջանակներում անդրադարձել են նաեւ Հրաչյա Աճառյանը[17], Նորայր արք. Պողարյանը[18], Լեւոն Խաչերյանը[19], Ավետիս քհն. Դանիելյանը[20], Հակոբ Քյոսեյանը[21] եւ Գառնիկ Ստեփանյանը[22]: Սակայն մեր թվարկած բոլոր հեղինակների գործերում կա՛մ բացակայում է Կիրակոս Երզնկացու կենսագրության ինչ-որ փաստ եւ տեղեկություն, կա՛մ չի տրվում նրա մատենագրական ժառանգության ամբողջական պատկերը: Այս առումով ցայսօր տպագրված բոլոր ուսումնասիրությունները թերի են: Ի նկատի ունենալով վերոբերյալ հեղինակների հաղորդած տեղեկությունները, ինչպես նաեւ վերջին մի քանի տարիների ընթացքում մեր ուսում-

---

14 Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Երիզա եւ Եկեղեաց գաւառ, էջ 225-236:

15 Տե՛ս **Հ. Քյուրտյան**, Անտիպ տաղեր Կիրակոս վարդապետ Երզնկացիէ. «Էջմիածին», 1965, Ը.-Թ., էջ 92-99:

16 Տե՛ս **Ա. Ն. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ. «Պատմա-բանասիրական հանդես», 1972, Հ՝ 4, էջ 137-145, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 5, Երեւան, 1979, էջ 450-451:

17 Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երեւան, 1944, էջ 624-625:

18 Տե՛ս **Նորայր եպս. Պողարեան**, Հայ գրողներ Ե.-ԺԷ. դար, Երուսաղէմ, 1971, էջ 382-384:

19 Տե՛ս **Լ. Գ. Խաչերյան**, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), Երեւան, 1973, էջ 157, նույնի «Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները Միջնադարյան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI դդ.)», Լիզպոն, 1998, էջ 47-48:

20 **Աւետիս քահանայ Դանիէլեան**, Կիրակոս Երզնկացի. «Գանձասար», հ. Զ., Երեւան, 1996, էջ 550-556: Նա առաջին անգամ հրատարակել է նաեւ Կիրակոսի «Թուղթ առ Կարնեցիս» դավանաբանական թղթի բնագիրը. անդ, էջ 557-584:

21 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 490-491:

22 Տե՛ս **Գառնիկ Ստեփանյան**, Երզնկա. հնագույն դարերից մինչեւ մեր օրերը, էջ 259-262: Մեծ մասամբ մեջ է բերել հայտնի տվյալներն ու փաստարկները, երբեմն էլ շփոթելով հեղինակի ապրած ժամանակաշրջանը:

նասիրության արդյունքում ի հայտ եկած կենսագրական նոր փվյալները՝ ցայսօր մեզ հասանելի աղբյուրների հիման վրա պիտի փորձենք տալ իր ժամանակի մեծանուն եկեղեցականներից մեկի՝ Կիրակոս վրդ. Երզնկացու կենսագրության եւ մատենագրական ժառանգության առավել ամբողջական պատկերը:

Ցավոք, մեզ անհայտ է Կիրակոս վարդապետի ծննդյան ստույգ թվականը: Ուսումնասիրողները, նկատի ունենալով նրա երկերում պահպանված կենսագրական կցկտուր տեղեկությունները եւ հիշատակարանները, առաջադրել են տարբեր թվականներ: Կիրակոսի ծննդյան թվականի հարցում ճիշտ են կողմնորոշվել Հարություն Քյուրտյանը եւ Արմենուհի Սրապյանը՝ այն դնելով 1275-1280 թթ. միջեւ: Ոչինչ չգիտենք նաեւ նրա նախնական կրթության մասին, որը հավանաբար անցել է հայրենի գավառում: Կիրակոս րաբունապետը «ՅԱստուծոյ ամենակալէն» սկսվածքով խրատական բովանդակությամբ շրջաբերական թղթում, որն ուղղված է հոգեւոր իր զավակներին՝ կրոնավորներին, քահանաներին եւ ժողովրդին, իր մասին մասնավորապես ասում է. «Այս է գիր ձեռին իմոյ, ի նուաստ Կիրակոս վարդապետէ Եզնկացոյ, մայրաքաղաքիս Հայոց Լուսաւորչի գաւառիս գրեցաք առ աստուածապահ ժողովուրդդ, ուր եւ հասանի»[23]: Այստեղից պարզ է դառնում, որ Կիրակոս րաբունապետը Լուսավորչի կամ Եկեղյաց գավառից է եւ նրա մայրաքաղաք Երզնկայի անվամբ կոչվել է Երզնկացի: Այս ինքնակենսագրական տեղեկությանը հավելյալ մի նոր փվյալ է հաղորդում վերեւում մեր հիշատակած՝ Մաշտոցյան Մատենադարանի Հմր 1379 ձեռագիրը, որի ստացողը հենց Կիրակոս րաբունապետն է: Ձեռագրի գրչության հիշատակարանում գրիչ եւ ծաղկող Թորոսն, ի շարս այլոց, խնդրում է հիշել նաեւ Կիրակոս Երզնկացուն՝ ասելով. «Յիշատակեցէք զՄեծպարոնն ի բարի, որ ետ գրել զսա յաւժարական ի լի, սիրահարուստ վարդապետի՝ Ազրկցոյ Կիրակոսի, վարդապետաց վարդապետի»[24]: Գրչության ժամանակի այս հիշատակարանից իմանում ենք, որ Կիրակոս Երզնկացին ծնվել է Եկեղյաց գավառի Ազրակ գյուղում, ուստի իր ծննդավայրի անվամբ կոչվել է նաեւ Ազրկեցի կամ Ազրակցի[25]: Ձեռագրական այս փվյալից բացի, մեզ հայտնի չէ որեւէ այլ ձեռագիր կամ երկ, որում Կիրակոս Երզնկացին Ազրկեցի է կոչվում:

Ինչպես վերեւում նշեցինք, երջանիկ պատահականությամբ Կիրակոսի տաղերից մեկում պահպանվել են նրա ծնողների անունները. «Ննջեցելոց իմոց ծնողաց, որ զիս ծնան, Յոհաննիսի եւ Հիպայի, որ առ քեզ կան»[26]: Տաղերի հրատա-

---

23 ՄՄ ձեռ. Հմր 228, 1457 թ., էջ 171ա, հմմտ. «Բազմավէպ», Վենետիկ, 1943, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 66:

24 Տե՛ս ՄՄ ձեռ. Հմր 1379, էջ 45բ:

25 Տե՛ս **Ա. Ն. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, . «Պատմա-բանասիրական հանդես», 1972, Հմր 4, էջ 195-196: Ազարակի մասին տե՛ս **Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան**, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երեւան, 1986, էջ 26, **Հ. Համազասպ Ոսկեան**, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 100-101:

26 **Հ. Քյուրտյան**, Անտիպ տաղեր Կիրակոս վարդապետ Երզնկացիէ, էջ 97, **Նորայր եպս. Պողարեան**, Հայ գրողներ, էջ 382:

բակող Հարություն Քյուրտյանը նշում է, որ Հովհաննես անունը շատ սովորական եւ գործածելի անուն է եղել Երզնկայում եւ ընդհանրապես Եկեղյաց գավառում, ինչը չենք կարող ասել Գիրակոսի մոր անվան համար[27]: Ըստ ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանի՝ «Պետք է կարդալ Հիբա եւ ծագումը դնել արաբ. hiba «նվեր, պարգեւ», ինչպես ունինք Հաղիա, Պարգեւ, Ընծայ անունները, բոլորն էլ նույն նշանակութեամբ: Մի անգամ գտնում եմ հիշատակված՝ Հիպայ, դուստր Ներսէսի եւ քոյր Բասիլ գրչի, որ Կիլիկիայի Խորին անապատում օրինակեց մի մեծ ճառընտիր, 1270 թ.»[28]:

Ժամանակագրական առումով Գիրակոս Երզնկացու մասին ցայժմ պահպանված առաջին տեղեկությունը մեջբերել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, հայագիտության նվիրյալ Հայր Ղեւոնդ Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ. ոմն Ոսկան վարդապետ, 1304 թ. ընդօրինակելով մի Ավետարան «ի վանս Գլաձոր Ս. Ստեփանոսին», Եսայի վրդ. Նչեցու (1260-1338) աշակերտների թվում հիշատակում է նաեւ Գիրակոս Երզնկացուն[29]: Փաստորեն այս տեղեկությունից կարող ենք եզրակացնել, որ Գիրակոսն իր ատրվաճաբանական բարձրագույն կրթությունը շարունակել է Գլաձորի նշանավոր համալսարանում՝ աշակերտելով ժամանակի հռչակավոր ռաբունապետ Եսայի Նչեցուն՝ հետագայում ինքը նույնպես դառնալով այդ հաստատության ուսուցչապետներից[30]:

Մաշտոցյան Մատենադարանում պահվող 1317 թ. Գլաձորում ընդօրինակված ձեռագիր մի Ատրվաճաշնչում, որի ստացողը եւ գրիչներից մեկը նույն Գիրակոս Երզնկացին[31] է, երկու հիշատակարաններ են պահպանվել, որոնցում գրիչը հիշում է Եսայի Նչեցի ռաբունապետին. «Զամենամեղ ոգի՝ զԳիրակոս գրիչ եւ ստացող սուրբ կտակացս, եւ ծնաւղսն իմ եւ զերջանիկ ռաբունապետս մեր, որ զօրինակս շնորհեաց, յիշել աղաչեմ»[32], իսկ Տիրացու գրչի հիշատակարանում ասվում է. «Զմեծ ռաբունապետն զԵսայի եւ զհեստեւող նորին՝ զԳիրակոս վարդապետն, ընդ նոցին եւ զմեղաւոր հոգս՝ Տիրացու գրիչ, աղաչեմ յիշել ի Տէր»[33]: Թե ինչքան է Գիրակոս Երզնկացին մնացել Գլաձորում եւ աշակերտել Եսայի ռաբունապետին, հայտնի չէ, քանզի աղբյուրները լռում են այդ մասին: Ինչպես արդեն ենթադրել ենք մեր հոդվածներից մեկում, Գիրակոս Երզնկացու՝

27 Տե՛ս անդ, էջ 91:

28 **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Երեւան, 1946, էջ 88:

29 Տե՛ս «Սիսական. Տեղագրութիւն Սիսեաց աշխարհի ի Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշան», Վենետիկ, 1893, էջ 134:

30 **Գ.Բ. Մ. Գրիգորյան**, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Երեւան, 1981, էջ 163:

31 Գիրակոս ռաբունին ձեռագրերում հաճախ հիշվում է իբրեւ պատվիրատու, գրիչ եւ ստացող: Ժամանակին այս իրողությունը նկատել է Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսը՝ նշելով. «Գիրակոս ինքն էլ ԺԴ. դարի առաջին կեսի նշանավոր գրիչներից եւ վարդապետներից մեկն է, որ իր եղբօրորդի Յովհաննէսի հետ բազմաթիւ ձեռագիրներ ունի գրած եւ երկար ժամանակ ուսուցչութիւն է արել յատկապէս իր հայրենիքում Երզնկայում». **Գարեգին կաթողիկոս Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 267-268:

32 ՄՄ ձեռ. Հ^{գր} 353, էջ 32բ:

33 Նույն տեղում, էջ 310ա:

Հովհաննեսի Ավետարանի Ա. 1 համարի մեկնությանը նվիրված ճառում հիշատակվող ռաբունապետը ոչ այլ ոք է, եթե ոչ հենց Եսայի Նչեցին, որի պատվերով նա գրել է իր մեկնողական ճառը[34]: Սա ևս լրացուցիչ տեղեկություն է Կիրակոս Երզնկացու եւ նրա ուսուցչի՝ եռամեծ Եսայի ռաբունապետի մտերմիկ հարաբերությունների եւ կապի մասին:

Դժբախտաբար, Ղեւոնդ Ալիշանի մեջբերած տեղեկության մեջ չի նշվում եւ պարզ չէ, թե «երկրորդ Աթենք» կամ «Մայրաքաղաք ամենայն իմաստից» բնորոշմամբ հայտնի Գլաձորի համալսարանում ուսանելիս եկեղեցական ինչ աստիճան ուներ Կիրակոս Երզնկացին՝ արեղա՞ էր, թե՞ վարդապետ: Այստեղ պետք է նկատի ունենալ այն կարեւոր հանգամանքը, որ Գլաձորում ուսանում էին ոչ թե նորընծաները, այլ արդեն քահանայական աստիճան ունեցողները, որոնք կրթական այս կաճառ էին գալիս վարդապետական աստիճան եւ առավել խորացված աստվածաբանական կրթություն ստանալու համար[35]: Ուստի պետք է ենթադրել, որ Կիրակոսն այդ ժամանակ կուսակրոն հոգեւորական էր՝ արեղա: Այս պնդումը հիմնավորվում է նաեւ նրանով, որ 1305 թ. գրված ձեռագիր հնագույն երկու «Շարակնոց» ժողովածուի մեջ, որտեղ զետեղված է Ս. Աստվածածնի Վերափոխմանը նվիրված՝ Կիրակոս ռաբունապետի «Արեւելք գերարփիս» շարականը, նա արդեն վարդապետ է անվանվում, իսկ շարականի վերջին տունն ունի «Կիրակոս վարդապետ» ծայրակապը[36]: Եթե 1305 թ. Կիրակոսն արդեն վարդապետական աստիճան ուներ, իսկ միջնադարում ամրագրված ավանդության համաձայն՝ կուսակրոն եկեղեցականը վարդապետական աստիճան էր ստանում կատարյալ տարիքում՝ 30 տարեկանում, ապա Կիրակոս ռաբունապետը ծնված պետք է լինի մոտավորապես 1275 թ.[37]: Կարծում ենք, որ Կիրակոս Երզնկացին վարդապետական զավազան եւ իշխանություն է ստացել հենց Եսայի Նչեցի ռաբունապետից, որի ձեռնասունն է եղել երկար տարիներ[38]: Գլաձորի

34 Տե՛ս **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու Հովհաննեսի Ավետարանի Ա. 1 համարի մեկնությունը. «Էջմիածին», 2012, Թ., էջ 79-80:

35 Տե՛ս **Լ. Գ. Խաչերյան**, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), էջ 173-175:

36 Սա կանոնական վերջին շարականն է, որ մտել է «Շարակնոց» ժողովածուի մեջ. տե՛ս Վիեննայի Մխիթ. մատ. ձեռ. ՀՄ 212, 1305 թ., էջ 324բ. «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակոբվոս Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 535, Երուսաղեմի մատենադարան, ձեռ. ՀՄ 1575, 1305 թ., էջ 697. «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ե., էջ 355: Այս շարականը վերագրվել է նաեւ Կիրակոս Թարգմանչին. տե՛ս **Միքայէլ Չամչեանց**, նշվ. աշխ., էջ 508, «Շարակնոց», Կոստանդնուպոլիս, 1815, էջ 5: Զարմանալի է, որ Կիրակոսի մատենագրական ժառանգությանը ծանոթ մեր եկեղեցու եռամեծ վարդապետներից Ս. Գրիգոր Տաթեւացին (1346-1409) շարականների հեղինակներին թվելիս չի դալիս ո՛չ «Արեւելք գերարփիս» շարականի եւ ո՛չ էլ նրա հեղինակի անունները. տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց, Երուսաղեմ, 1993, էջ 637-638:

37 Տե՛ս ՄՄ ձեռ. ՀՄ 1379, 1334 թ., էջ 45բ: Հայագիտության մեջ երբեմն Կիրակոս Երզնկացուն շփոթել են Կիրակոս Արեւելցու հետ. տե՛ս **Ա. Ն. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, էջ 137-145:

38 Գառնիկ Ստեփանյանը, նկատի ունենալով, որ Կիրակոս Երզնկացին 1324 թ. եղել է Երզնկայի Կայիփոսի վանքում եւ այնտեղ զբաղվել ուսուցչությամբ, ենթադրում է, որ այնտեղ էլ նա հավանաբար ստացել է իր վարդապետական աստիճանը. տե՛ս **Գառնիկ Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 260:

համալսարանին նվիրված իր աշխատության մեջ փաստերի քննությամբ Լեւոն Խաչերյանը նշում է, որ այնտեղ ուսումնառությունը տեւում էր 7-8 տարի, որը համընկնում էր տվյալ ժամանակաշրջանի եւրոպական համալսարաններում աստվածաբանական բարձրագույն կրթության համար նախատեսված ուսումնառության տեւողությանը[39]: Եթե 1305 թ. Կիրակոսն արդեն վարդապետ էր, եթե եւ հաշվի առնենք նաեւ Գլաձորում ուսում ստանալու ժամանակահատվածը, ապա Կիրակոսը Գլաձորի համալսարան պիտի եկած լիներ 1297-98 թթ. շուրջ 22-23 տարեկանում:

Վերոգրյալ մեկնողական նույն ճառում Կիրակոս Երզնկացին նախքան վարդապետական աստիճան ստանալը, իբրեւ Հայոց Եկեղեցու խոնարհ մի սպասավոր, իր մասին ասում է. «Իսկ ես թափուր եւ ունայն գոլով յամենայնէ, զի ոչ ընկալայ շնորհս յԱստուծոյ որպէս զումպար խմբից առաջին սրբոցն, որք յորովայնէ մաքրեցան տաճար Աստուծոյ եւ բնակարան Հոգւոյն Սրբոյ, եւ ոչ վարդապետական հանճարոյ արժանացայ յաղագս ոչ գոլոյ բնական իմաստութեան եւ փոքրատար ունելոյ զանաւթս մտացս բնութեան, եւ զի ոչ տքնեցայ յոլով ժամանակս ի դրունս իմաստնոց՝ կրթելով ի վարժս մակացութեան, եւ ոչ զաստուածային մատեանսն անընթ[ի]ատ ի վերայ բազկաց կրեցի, եւ ոչ եռանդնաշարժ սիրով փափաքմամբ կորզեցի զստինս հոգիընկալ վարդապետաց, որով **աճեցեալ ի չափ հասակի կատարմանն ժամանէի**»[40]: Ընդգծված հատվածը վկայում է, որ այս տողերը շարադրելիս նոր պետք է լրանար նրա 30-ամյակը, իսկ յուրաքանչյուր մեկնիչից աստվածաբանական խորը գիտելիքներ պահանջող Հովհաննեսի Ա. 1 համարի Կիրակոս Երզնկացու մեկնությունը լավագույն վկայությունն է վարդապետական աստիճան ստանալու համար նրա տարիքային, հոգեւոր հասունության եւ պատրաստության մասին:

Կիրակոս վարդապետի մասին հաջորդ տեղեկությունը պահպանվել է 1309 թ. գրված Մաշտոցյան Մատենադարանի Ձեռ. 3931 ձեռագրում, որը Տոնական ժողովածու է[41]: Արմենուհի Սրապյանն այս ձեռագրի հիշատակարանում նշված Կիրակոս րաբունուն նույնացնում է Կիրակոս Երզնկացու, իսկ «Յովհանէս գծողին»՝ Կիրակոսի եղբորորդի համանուն վարդապետի հետ. «Գրեցաւ նամակ Տաւնակ[ան]իս հրամանաւ եւ արդիւնագործ սուրբ ռաբունոյն Կիրակոսի, ձեռամբ իմով՝ Յովհանէս գծողի, աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի անմեղադիր լինիք խոշորութեանն եւ խալաթութեանն, զի անհմուտ էի գրոցս այս, եւս առաւել աւրինակիս, որ չէի ամենեւին լսել զսայ», «Ով եղբայր Կիրակոս, խոշորութեան եւ սխալանաց անմեղադիր լեր, զի Բ. դաս առաջի եդեալ կայ,

39 Տե՛ս **Լ. Գ. Խաչերյան**, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), էջ 173-175:

40 **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու Հովհաննեսի Ավետարանի Ա. 1 համարի մեկնությունը, էջ 85:

41 Ծիսական այս եւ մյուս ժողովածուների մասին տե՛ս **Փայլակ Անթարյան**, «Տօնապատճառ» ժողովածուն, «Բանբեր մատենադարանի», Ձ՝թ 10, էջ 103-126:

փագնապիմ»[42]: Սակայն Լեւոն Խաչիկյանը (1918-1982) այստեղ հիշատակված Կիրակոսին նույնացնում է ոչ թե Կիրակոս Երզնկացու, այլ Արտազի գավառի Ս. Թադեոս վանքի սպասավոր Կիրակոս ռաբունապետի հետ: Վերջինիս համար նա վկայակոչում է մեկ այլ ձեռագրական տվյալ նույնպես. «Զտաւնաւղ տաւնից տէրունական եւ պայծառացուցիչ յիշատակաց որդւոց վերինն առագաստի, բազմահամբաւ պատրաստութեամբ ըստ իմանալի մտաց լուցման լապտերաց եւ բուրման խնկոց անուշահոտութեան, զրաբունապետս զՅովհաննէս եւ զԿիրակոս յիշեսջիք ի Տէր Յիսուս»[43]: Մենք նույնպես կարծում ենք, որ վերոգրյալ ձեռագրերում մատնանշված Կիրակոսն իսկապես Կիրակոս Երզնկացին է, իսկ երկրորդ ձեռագրում նրա հետ հիշատակված ռաբունապետը ոչ այլ ոք է, եթե ոչ այն Հովհաննես ռաբունապետը, որի պատվերով նա գրել է Ս. Եւագրի լուծմունքները: Այս Հովհաննեսին չպետք է շփոթել նրա ազգական Հովհաննեսի հետ, որը Տոնական ժողովածուի հիշատակարանում մտերմաբար իրեն «Յովհաննէս գծող» է կոչում: Կիրակոս Երզնկացի-եղբորորդի Հովհաննես նույն բարեկամական շեշտադրությունն ենք տեսնում նաեւ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի Հմր 268/915 «Ոսկեփորիկում»: Ըստ ձեռագրացուցակի կազմող Բարսեղ վրդ. Սարգիսյանի՝ այս ժողովածուի մեջ Ս. Դիոնիսիոս Արեոպագացու երկերի լուծմունքները գրված են Կիրակոս Երզնկացու համար Հովհաննես գրչի կողմից. «Ո՛վ արքա իմ եւ տէր, ռաբունի բարի եւ իմաստուն, համայն ցանգալի Կիրակոս, զսակաւ գծեալս ընկալ ի մէնջ, եւ զքո աղքատ հոգով Յոհաննէս մի՛ մոռանայր ի մաքրափայլ յաղօթս քո, իսկ գրոյս անմեղադիր [լեր], զի կար իմ այսչափ էր»[44]: Այնուհետեւ սկզբնաղբյուրները լռում են Կիրակոսի գործունեության մասին մինչեւ 1317 թ.: Հավանաբար նա արդեն ավարտել էր իր ուսումնառությունը Գլաձորում, Եսայի Նչեցուց ստացել վարդապետական գավազան եւ դասավանդությամբ էր զբաղվում իր սիրելի կրթօջախում:

1317 թ. Գլաձորում ընդօրինակված Աստվածաշնչում, որի ծաղկողը նույն դպրոցի տաղանդաշատ մանրանկարիչներից Թորոս Տարոնացին[45] է, պահպանվել են մի քանի հիշատակարաններ Կիրակոս վարդապետի մասին: Ձեռագրի գրիչները կրկին գովեստով են խոսում այս Սուրբ Գրքի ստացող Կիրակոսի մասին՝ խնդրելով, որ Տեր Աստված ողորմած գտնվի նրա հանդեպ երկրորդ գալստյան ժամանակ՝ հավելելով. «Զամենամեղ ոգի՝ զԿիրակոս գրիչ եւ ստացող Սուրբ Կտակաց, եւ զծնաւղսն իմ եւ զերջանիկ ռաբունապետս մեր, որ

42 ՄՄ ձեռ. Հմր 3931, 1309 թ, էջ 272բ-273ա, «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 60-61, **Ա. Ն. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, էջ 191:

43 ՄՄ ձեռ. Հմր 3778, 1315 թ., էջ 465բ, «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 116:

44 «Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», յօրինեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, հ. Բ., Վենետիկ, 1924 էջ 882, «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 61, **Ա. Ն. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, էջ 191:

45 Նրա մասին տե՛ս **Լ. Գ. Խաչերյան**, Հայագիր դպրոթեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները Միջնադարյան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI դդ.), էջ 71-75:

զօրինակս շնորհեաց, յիշել աղաչեմ, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն»[46], «Զանպիտան զծող եւ զսպացող սուրբ տառիս եւ զեղբաւրորդիս իմ զՅովհաննէս սարկաւագ, որ զանձն ի յաշխատանս եղ՝ ջանակից լինել մեզ, մանաւանդ թէ զյոլով մասն սա գրէ, վասն որոյ աղաչեմ յիշ[ել] ի Տէր զիս՝ զապիկարս Կիւրակ[ոս], եւ զՅովհաննէս, զծնաւղսն մեր, եւ Աստուած յիշողսդ յիշէ. ամէն»[47], «Որ սպաներ զվիշապն մեծ՝ զամբարտաւան հայրն ջարեաց, սպան եւ զիմ հոգւոյս դրժողն՝ զիմանալի եւ զգալին, դարձոյ զվնասակար քո ծառայի՝ Կիրակոսի վարդապետի, եւ զանմարմինն անլոյծ կապեա ի շղթայի այժմ եւ յաւուրն ապագայի. ամէն»[48], «Ո՛վ սրբասնեալ ռաբունի Կիրակոս, անարժան նկարչիս Թ-որոսի յանցանաց թողութիւն հայցեա՛ ի Քրիստոսէ Աստուծոյ»[49], «Տէր Աստուած, ի Քո միւսանգամ գալստեանդ ողորմեա՛ Կիրակոս վարդապետի եւ Յովհանիսի եղբօրորդոյն իւրոյ եւ ամենայն արեան մերձաւորաց...»[50]:

Վերոգրյալ Աստվածաշնչի գրությունից մեկ տարի անց Ստեփանոս, Կյուրակե եւ Հովհաննես Երզնկացի գրիչների կողմից Եսայի Նչեցի ռաբունապետի համար ընդօրինակվում է եւս մեկ Աստվածաշունչ մատյան, որն այժմ Մաշտոցյան Մատենադարանի Հմր 206 ձեռագիրն է՝ մագաղաթյա, երկսյուն գրությամբ, բոլորգիր՝ մարգարտաշար վայելչագրությամբ եւ ինքնատիպ գեղարվեստական լուծումներով[51]: Հայագիտության անխոնջ մշակ եւ մեր Եկեղեցու բանիմաց հոգեւորականներից Գարեգին Հովսեփյանն այս Աստվածաշունչն անվանում է «Գլաձորի դպրոցի գրչության գլուխգործոց»[52]: Նա այս մատյանի գրիչ Կիրակոսին (ձեռագրում՝ Կիւրակէ) սխալմամբ նույնացնում է Կիրակոս Երզնկացու հետ: Այս հարցում մեծանուն հայագետի հետ համակարծիք է նաեւ Լեւոն Խաչերյանը[53]:

Պետք է նշել, որ վերոգրյալ ձեռագիրն ունի մի քանի գրիչներ, որոնց մեջ հիշատակվում է նաեւ «Կիւրակէ» անունով մեկը: Արդյո՞ք այս ձեռագրում հիշատակված «Կիւրակէ» գրիչը եւ Կիրակոս վրդ. Երզնկացին նույն անձն է: Գարեգին Հովսեփյանի եւ Լեւոն Խաչերյանի կարծիքներից առաջ Հարություն Քյուրտյանն արդեն կասկածի տակ է առել այս նույնականացումը՝ բերելով մի շարք հակափաստեր: Ըստ նրա՝ «Կիրկէ» անունը Կիրակոսի սղագրյալ ձեւերից

46 ՄՄ ձեռ. Հմր 353, էջ 32բ:

47 Անդ, էջ 70բ:

48 Անդ, էջ 622ա:

49 Անդ, էջ 90բ:

50 Անդ, էջ 359ա:

51 Ձեռագրի ամբողջական նկարագրությունը տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, խմբագրությամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Երեւան, 1984, էջ 913-919:

52 Տես **Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, էջ 268:

53 Տես **Լ. Գ. Խաչերյան**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները Միջնադարյան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI դդ.), էջ 73:

չէ: Բացի այդ, մեր մատենագրության մեջ ունենք «Կիւրիկէ» կամ «Կորիկէ» անձնանունները: 1317 եւ 1318 թթ. գրված այս երկու Աստվածաշունչների հիշատակարանների ոճը նույնպես տարբեր է, եւ «Կիւրակէ» գրիչը սիրում է իր ծնողներին «քաղցրիկ» անվանել՝ ի տարբերություն Կիրակոս Երզնկացու[54]: Աչքի անցկացնելով Կիրակոս ռաբունու երկերի ձեռագրերը եւ նրա մասին պահպանված հիշատակարանները՝ պետք է եւս մեկ անգամ ընդգծենք, որ ոչ մի տեղ Կիրակոսը «Կիւրակէ» կամ «Կիրկէ» ձեւով հանդես չի գալիս, ուստի այս ձեռագրում հիշատակված գրիչը եւ Կիրակոս ռաբունապետը նույն ժամանակաշրջանում գործած տարբեր անձեր են[55]:

1322 թ. Կիրակոսն արդեն ավարտել էր առավելապես հովվական եւ դաստիարակչական ուղղվածություն ունեցող «Բանք խրատականք» աշխատությունը, որը հեղինակի մի քանի այլ գործերի նման երջանիկ պատահականությամբ մեզ է հասել ձեռագիր մեկ ընդօրինակությամբ[56]:

Ապա 1324 թ. Կիրակոս Երզնկացուն հանդիպում ենք Երզնկայում, որի մասին վկայում է Մաշտոցյան Մատենադարանի ՀՄՌ 2329 ձեռագրի հետագա հիշատակարանը. «Ես՝ Կիւրակոս վարդապետս բնակեցա ի լերինս Սուրբ Լուսաւորչիս: Աղաչեմ զվերջոյ եկեալսդ յիշել զմեզ ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն»[57]:

Սրանից մեկ տարի անց՝ 1325 թ., նույն Երզնկայում Կիրակոս Երզնկացու պատվերով Կարապետ երեցն ընդօրինակում է Փիլոն Եբրայեցու (ն. Ք. 25-Ք. հ. 50) երկերը: Մաշտոցյան Մատենադարանի ՀՄՌ 2100 ձեռագրի գրիչը մասնավոր նշում ունի պատվիրատու վարդապետի մասին՝ ընդգծելով, որ այն գրվել է «ի խնդիր սրբամաքուր եւ հոգիացեալ վարդապետին Կիրակոսի»[58]: Ձեռագիրն ունի նաեւ սպացողների մասին հիշատակություն. «Զվերջին սպացաւ այս իմաստագիծ մեկնողի՝ զԳրիգորիս, եւ զվարդապետ Կիրակոս յիշեալ աղաչեմ ի մեղաց քաւութիւն»[59]: Հետաքրքրական է, որ 17 տարի անց՝ 1342 թ., նույն Կիրակոս ռաբունապետի եւ նրա գործակից Հովհաննես վարդապետի խնդրանքով Թորոս գրիչն ընդօրինակում է կրկին Փիլոն Եբրայեցու գործերը, որի մասին է վկայում Մաշտոցյան Մատենադարանի ՀՄՌ 2102 ձեռագիրը. «Զսպացաւ աստուածային մատենիս՝ զերանաշնորհ, եռամեծ ռաբունապետն Կիրակոս եւ զնուաստ ծառայ նորին՝ զՅովաննէս պիտականուն վարդապետ, սպացաւոք սուրբ տառիս Փիլոնի մեծի յիշեցէք ի Տէր Յիսուս Քրիստոս եւ հայցեցէք թողութիւն մեղաց

54 Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Երիզա եւ Եկեղեաց զաւառ, էջ 227-228:

55 Հմմտ. **Ա. Ն. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, էջ 193:

56 Տե՛ս **Զաքարիա վարդապետ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Բանք խրատականք» երկը. «Էջմիածին», 2013, Ե., էջ 75-87:

57 ՄՄ ձեռ. ՀՄՌ 2329 (1291 թ.), էջ 302բ:

58 ՄՄ ձեռ. ՀՄՌ 2100 (1325 թ.), էջ 336ա:

59 Անդ, էջ 131ա:

մեզ եւ ծնողաց մերոց»[60]: Այս հենքի վրա ուշագրավ է, որ Կիրակոսի պատվերով ընդօրինակվել են նաեւ Քրիստոսի Եկեղեցու դասներկու վարդապետներից՝ Ս. Դիոնիսիոս Արեոպագացու (Ա. դ.) երկերը: Մաշտոցյան Մատենադարանի Ձեռ. 169 ձեռագիրը (ԺԳ.-ԺԴ. դդ.) ունի մի քանի վկայություն ձեռագրի ստացող Կիրակոս վարդապետի մասին. «Ջերջանիկ եւ զհոգիահրաշ վարդապետն զԿիրակոս՝ զստացաւղ սուրբ կտակիս, յիշեսջիք ի Տէր, ո՛վ ուսումնասէրք, եւ զանպիտան գր[ի՛ս], աղաչեմ»[61], «Ստացողի սորա՝ Կիրակոս վարդապետի ողորմեսցի ի Քրիստոս, եւ մեղուցեալ գրչի»[62], «Ջերջանիկ ռաբունին՝ զԿիրակոս զստացող գրոցս յիշեսջիք ի Տէր եւ զծնաւղսն իւր, եւ զբազմամեղ գրաւղս հանդերձ իմովքն»[63]: Այս ձեռագրի հիշատակարանից իմանում ենք նաեւ, որ այն գրվել է Կայիփոսի վանքում, որտեղ հավանաբար ուսուցչություն էր անում Կիրակոս Երզնկացին: Վերջինիս նախաձեռնությամբ գրված վերոգրյալ եւ նմանաբնույթ ձեռագրերը ցույց են տալիս, որ Երզնկայի դպրոցում մեծ ուշադրություն են դարձրել նաեւ հայրաբանական գրականությանը, որի օգնությամբ սաները հաղորդ են դարձել Եկեղեցու Հայրերի հոգեշահ գրվածքներին:

1328 թ. Կիրակոս Երզնկացուն տեսնում ենք Երկայնի Ս. Գեւորգ վանքում: Մխիթար Երզնկացու Աստվածաշնչի գրչի հիշատակարանում ասվում է. «Արդ, գրեցաւ գիրքս այս ի գաւառն Եկեղեաց, ի վանսն, որ կոչի Երկայնի, յորում է մեծ եւ հռչակաւոր վարդապետն Կիրակոս՝ արժանաւորն ամենայն գովեստի եւ յիշման, ի մեծի թուաբերութեան հայոց ՉՎԷ. (1328)»[64]: Մեջբերելով այս հիշատակարանը եւ ընդհանրացնելով փաստերը՝ Գառնիկ Ստեփանյանը դիպուկ նկատում է. «Միայն հարգանքի սովորական արտահայտություն համարել այդ մակդիրները՝ ճիշտ չի լինի: Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ Կիրակոս Երզնկացին մասնավորապես 14-րդ դարի առաջին տասնամյակներում Երզնկայի գավառում եղել է ճանաչված կրթական գործիչ, եւ ըստ երեւույթին ժամանակի ամենից հռչակված վանքերը միմյանց ձեռքից են խլել նրան՝ իրենց կրթական կշիռը բարձրացնելու ազնիվ մղումով»[65]:

1330 թ. Կիրակոս Երզնկացին արդեն Երզնկայից հեռու է՝ Ջուղայում: Այս մասին է փաստում Կիրակոսի ձեռքով գրված Նոր Ջուղայի մատենադարանի Ձեռ. 47 ձեռագիր Ավետարանը, որում պահպանվել են մի քանի հիշատակարան. «Արդ, գրեցաւ սա ի թուականութեան Հայկազեան տումարիս ՉՎԹ. (1330), ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի եւ Վրաց Գէորգայ եւ ի դանութեան Պաւսայիփի յանապատիս Ջղանա, ընդ հովա-

60 ՄՄ ձեռ. Ձեռ. 2102, 1342 թ., էջ 154ա:

61 ՄՄ ձեռ. Ձեռ. 169, ԺԳ.-ԺԴ. դդ., էջ 156բ:

62 Անդ, էջ 186ա:

63 Անդ, էջ 247ա:

64 Վենետիկի Մխիթ. մատ. ձեռ. Ձեռ. 19/212. տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ.Ա., էջ 160, «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 212:

65 **Գառնիկ Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 261:

նեաւ Սուրբ Աստուածածնիս եւ աստուածակիր սուրբ Նշանացս: Ձեռամբ ամենամեղ եւ անարժան ծառայի Աստուծոյ Կիրակոսի պիտակ անուն վարդապետի Երզնկայեցւոյն նշդեհի»[66], «Յիշել աղաչեմ եւ զԳէորգ կրաւնաւոր, որ աւգնեաց յուղղելն, եւ նշդեհակից մեզ էր եւ ցաւակից յամենայնի, եւ Աստուած զյիշողաղ յիշէ եւ որ զամէնն ասէ, ամէն»[67] եւ այլն: Ինչպես տեսնում ենք, ձեռագրի հիշատակարանը Կիրակոսի համար գործածում է «նշդեհ»՝ պանդուխտ բառը, իսկ Գեւորգ կրոնավորի դեպքում՝ «նշդեհակից»: Մեզ հայտնի չէ, թե ինչո՞ւ է Կիրակոսը թողել հայրենի Երզնկան եւ պանդխտել Ջուղա, ինչպես նաեւ, թե ե՞րբ է վերադարձել հայրենի գավառ: Հարություն Քյուրտյանը, մեջբերելով անանուն ժամանակագրի մի վկայությունը՝ «Ի թվին ՉՂԸ. (1329) Եզնկիս տանուտէրքն ի վեր Խանն գնացին եւ զխարաճն ու այլ շատ չարեր բարձին Պուսայիդ Խանին բանիւ, եւ ոչ գնաց յառաջ ի չար պարոնացն ձեռաց», գրում է. «Հավանական է, որ իբր համբավյալ կրոնական, Կիրակոս Երզնկացի ըլլար այն պատվիրակության մեջ, որ Երզնկայի տանուտերները Աբուսաիդ խանին ղրկեցին՝ իրենց վրա ճնշող տուրքերու մեղմացման կամ բարձման համար: Այս բանը թեեւ ձեռք բերվեցավ, սակայն չգործադրվեցավ Երզնկայի թուրք իշխանավորներուն կողմե»: Քյուրտյանը նաեւ մեջբերում է մեկ այլ տեղեկություն, ըստ որի 1330 թ. Սարգիս եպիսկոպոսը գնաց Խանի մոտ եւ մեկ տարի անց պատվով վերադարձավ: Այս երկու տեղեկությունների հիման վրա նա ենթադրում է, որ հենց այս գործով Կիրակոսը գնաց Պարսկաստան եւ այնտեղ նյութական կարիքի պատճառով ընդօրինակեց վերոբերյալ Ավետարանը[68]:

1331 թ. Կիրակոս Երզնկացու պատվերով նրա աշակերտ Մկրտիչ դպիրն ընդօրինակում է Մովսես վրդ. Երզնկացու († 1325) Ժամակարգության եւ Ս. Պատարագի մեկնությունները: Երուսաղեմի մատենադարանի Ձեռ. 395 ձեռագրում այս մասին պահպանվել են երեք նույնատիպ հիշատակարաններ. «Զսրտացաւղ լուսազարդ տառիս զհոգելից արդիւնաբան վարդապետն զԿիրակոս, եւ զսրտէ խոցեալս զՄկրտիչ դպիր, յիշեսջիք ի Տէր, աղաչեմ»[69]:

1334 թ. Կիրակոս րաբունու պատվերով Թորոս սարկավագն ու Մանուելն ընդօրինակում են Տիեզերական Եկեղեցու լուսազարդ այրեր Ս. Հովհան Ոսկեբերանի եւ Ս. Եփրեմ Ասորիի՝ Պողոսի ԺԴ. թղթերի մեկնությունները: Ինչպես արդեն նշել ենք, հենց այս ձեռագրում էլ պահպանվել է եզակի մի մանրանկար Կիրակոսի պատկերով: Բացի կենսագրական կարեւոր տեղեկություններից, ձեռագիրն ունի նաեւ մի քանի հիշատակարան Կիրակոս վարդապետի մասին. «Զսրտացաւղ գրոցս զկայծակնամաքուր վարդապետաց վարդապետն՝ զԿիրա-

66 «Յուցակ ձեռագրաց հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հ. Ա., կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 66:

67 Անդ, էջ 67:

68 Տե՛ս **Ն. Քիւրտեան**, Անտիպ տաղեր Կիրակոս վարդապետ Երզնկացիէ, էջ 92:

69 «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Բ., Երուսաղէմ, 1967, էջ 322:

կոս եւ զեղբաւրորդին իւր՝ զՅովհաննէս վարդապետ, յիշեա՛, ո՛ ընթերցող ի Տէր. ամէն»[70], «Զգրող գրոյս մի՛ մոռասցիս, ո՛ պատուական րաբունապէտ»[71] եւ այլն:

1341 թ. Կիրակոսը կրկին հայրենի Երզնկայում էր: Այս մասին է վկայում Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը պահպանվող Վարդան վրդ. Արեւելցու († 1271) Սաղմոսաց մեկնության Հմր 1365/278 ձեռագիրը, որը գրչության ժամանակի հիշատակարան չունի: Հստակ է, որ այն 1341 թ. գնել եւ նորոգել է Կարապետ երեցը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ձեռագիրը ԺԴ. դարի գրչություն է, քանզի հիշատակվում է նաեւ Կիրակոս Երզնկացու անունը. «Արդ, պատմեցից ձեզ զհանդիպումն աստուածաշունչ քնարիս, զի զառաջինն երեկ Մեսրաւպ վարդապետն ի փեղս առ մեզ եւ կամք ունէր, որ ժամանակ մն[այր] դադարէր ի դուռն Սուրբ Աստուածամաւրս եւ սպասաւորի [անար] ժանիս, որ Կարապետ անուանի եւ ընդ միեղէն եղբարց: Եւ տեսեալ զմեկնիչս, փափաքեցաւ առնուլ, զի յաւտար աշխարհէ բերին զսառս, նայ մեր մեղոնակից եւ սնընդակից եղբա[յ]ր Աւաքն շարժեալ ի սէր նորայ, մեք եւս առաւել յորդորեցաք զնայ, որ գնեաց զգիրքս ի վայելումն վարդապետին: Եւ վարդապետն կամեցաւ գնալ Յեզնկան՝ առ Կիրակոս վարդապետն, շարժիլ ի նմանէ եւ հրաման առնուլ եւ դառնալ առ մեզ: Եւ ի գնալն նորայ ըզգիրքս առ մեզ եթող, բայց մեր մեղացն պատուհասն, որ փիրեաց աշխարհի, եւ նայ ընդ այն տարաժամ մահու վաղջանեալ անդ, եւ իւր աղբարն երեկ Սարգիսն եւ եբեր Կիրակոս վարդապետին գիրն, որ անդարձ էր արել Մեսրոպ վարդապետն ու ասել, թէ ի Կամախ գիրք կայ ինձ, ի Կարապետ երէցն ի մաւտ նայ Եփիր աղբարն...»[72]:

Փաստորեն Մեսրոպ վարդապետը տեսնում է Վարդան Արեւելցու Սաղմոսաց մեկնության ձեռագիրը եւ ցանկանում ձեռք բերել այն, բայց հավանաբար համապատասխան գումար չունենալու պատճառով եղբայր Ավագը ձեռագիրը գնում է Մեսրոպ վարդապետի համար: Սակայն վերջինս գիրքը թողնում է եւ վերադառնալու պայմանով ճանապարհ ընկնում Երզնկա՝ Կիրակոս րաբունապետի մոտ, բայց նա ճանապարհին վաղաժամ մահանում է եւ չի հասցնում հանդիպել նրան: Մեսրոպը, այնուամենայնիվ, հասցրել էր գրքի մասին տեղյակ պահել իր եղբորը: Եւ ահա նրա փոխարեն Կիրակոսի խնդրանք-նամակը երկրորդում է Մեսրոպ վարդապետի եղբայր Սարգիսը եւ նշում. «Գնեցի զսա ի հալալ արդեանց իմոց, ի վարժումն ոգոյս իմոյ եւ կալեցի ձեռաւք իմաւք՝ ըստ կարեաց իմոց»[73]: Վարդանի այս մեկնությունը Կիրակոս Երզնկացու համար էր, որը նա հավանաբար պիտի օգտագործեր դասախոսություններ պատրաստելու եւ աշակերտներին ուսուցանելու համար: Չպետք է մոռանալ, որ Կիրակոս Երզնկացին քաջատեղյակ է ընդհանրապես Վարդանի երկերին, որոնցից բա-

70 ՄՄ ձեռ. Հմր 1379, էջ 271բ:

71 Անդ, էջ 333ա:

72 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վենետիկ», հ. է., Տօնապատճառ ժողովածոյ, Մատենագիրք հայոց, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, էջ 710:

73 Նոյն տեղում:

ռացի եւ իմաստային մեջբերումներ է կատարել իր տարբեր գործերում: Մեծ է եղել այս մեծանուն վարդապետի ազդեցությունը Կիրակոսի աստվածաբանական մտածողության վրա: Այս փաստը ցույց է տալիս նաեւ հայկական տարբեր աստվածաբանական դպրոցների եւ հայրենի վարդապետների միջեւ ստեղծված հոգեմտավոր կապը՝ հանուն Հայոց Եկեղեցու ուղղափառ դավանության անաղարտության եւ Սրբազան Ավանդության պահպանման:

1346 թ. արդեն ընդօրինակված ենք տեսնում Կիրակոս ռաբունապետի՝ Սաղմոսաց գրքի ԻԸ. 3 համարի բացատրությանը նվիրված մեկնողական հետաքրքիր ճառը, որը մեզ է հասել կրկին ձեռագիր մեկ օրինակով[74]: Նույն այս ձեռագրում պահպանվել է նաեւ Կիրակոսի մյուս երկը՝ «Նախերգան Տեառնընդառաջին» ուշագրավ ճառը[75]:

Կիրակոս Երզնկացին կյանքի մայրամուտին անդրադառնում է Ս. Եւագր Պոնտացու (Դ. դ.) գրական ժառանգությանը եւ լուծմունքներ գրում նրա «Յաղագս Ը. խորհրդոցն»[76] եւ «Հարիւրաւորք վեցերորդք» աշխատությունների վերաբերյալ, որոնք պահանջում էին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլեւ ներանձնական հոգեւոր փորձառություն: Եւագրի «Հարիւրաւորքի» լուծմունքը Կիրակոսից մեզ հասած վերջին աշխատությունն է, որի հիշատակարանում հեղինակն ասում է. «Ես նուաստս եւ յետինս ի վարժապետաց Կիւրակոս ի յութ հարիւր եւ յերեք (1354) թուականիս Հայոց արարի զվերլուծութիւն «Հարիւրօտրաց» սուրբ հօրն Եւագրեայ՝ տկար գոլով հոգւով եւ մարմնով, եւ անիմաստ եւ փոքրատար մտօք»[77]:

Ի տարբերություն Կիրակոսի ծննդյան թվականի անորոշության, ավելի որոշակի է նրա մահվան տարեթիվը: Մեզ են հասել հենց Կիրակոսի աշակերտ Ստեփանոս երեցի ձեռքով գրված երկու ձեռագիր, որոնցում պահպանվել են արժեքավոր հիշատակարաններ խնդրի վերաբերյալ: 1355 թ. Երզնկայում գրված Մաշտոցյան Մատենադարանի Ձ՚ 3276 ձեռագրում ասվում է. «Գրեցաւ սա ՊԴ. (1355) թվին յամսեան օգոստոսի Դ. (4), ի վայելումն եւ յիշատակ Գրիգոր աբեղային գրոց աշակերտի եւ բանի սպասաւորի, որ եւ գրել զսա՝ յիշատակ իւր եւ ծնօղաց իւրոց եւ ամենայն արեան առուաց եւ համօրէն իւր երախ-

74 Տե՛ս **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու ԻԸ. 3 սաղմոսի մեկնությունը. «Էջմիածին», 2012, Է., էջ 64-91:

75 Տե՛ս **Տիգրան սրկ. Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Նախերգան Տեառնընդառաջին» ճառը. «Էջմիածին», 2011, Գ., էջ 82-109: Տարիներ առաջ այս ճառը հրատարակել ենք՝ ըստ Մաշտոցյան Մատենադարանի Ձ՚ 2187 ձեռագրի (էջ 245ա-267ա): Ուրախությամբ պիտի նշենք, որ այսօր մեր ձեռքի տակ ունենք նաեւ ճառի ԺԴ. դարի վենետիկյան ընդօրինակությունը, որն իր գրչությամբ ավելի հին է երեւում, քան Մաշտոցյան Մատենադարանինը, չնայած այն չունի ընդօրինակման հստակ թվական: Ճառի համեմատական բնագիրը շուտով կհրատարակենք Կիրակոս Երզնկացու կյանքին, գործունեությանը եւ մատենագրական վաստակին նվիրված մեր ուսումնասիրության մեջ՝ այնտեղ զետեղելով Կիրակոսից մեզ հասած բոլոր երկերի բնագրերը:

76 Տե՛ս **Զաքարիա վարդ. Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու՝ Ս. Եւագր Պոնտացու ութ մեղքերի մեկնությունը. «Էջմիածին», ԺԲ., էջ 74-114:

77 ՄՄ ձեռ. Ձ՚ 1980, 1391 թ., էջ 160բ:

տաւորացն եւ սուրբ բաբունապետացն իւրոց Կիրակոսի եւ Յովանիսի, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի, եւ բանք նոցա առաւել պտղաբերեսցի»[78]: Ավելի արժանահավատ եւ ստույգ է մյուս հիշատակարանի հաղորդած տեղեկությունը. Երուսաղեմի մատենադարանի Ձ՚ 1236 ձեռագրի հիշատակարանում, որը գրվել է 1356 թ. մարտի 18-ին Ստեփանոս երեցի կողմից, ասվում է. «Յիշեսջիք եւ զերջանիկ եւ զերիցս երանեալ բաբունապետն մեր զԿիրակոս վարդապետն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, նոյեմբեր ԺԵ., եւ զմեզ եթող որբս յայս կենցաղս...»[79]: Հետազոտողների մեծ մասը (Հարություն Քյուրտյան, Արմենուհի Սրապյան, Ավետիս քհն. Դանիելյան, Հակոբ Քյոսեյան), նկատի ունենալով այս վերջին հիշատակարանը, իբրեւ Կիրակոսի մահվան տարեթիվ նշել են 1356-ը, այսինքն՝ հիշատակարանի գրության թվականը: Բայց Նորայր արք. Պողարյանը կարծում է, որ Կիրակոս Երզնկացին մահացել է 1355 թ.[80]: Նույն կարծիքին է նաեւ Գառնիկ Ստեփանյանը, չնայած իր աշխատության սկզբում տալիս է այլ թվական՝ 1372[81]:

Կիրակոսի ձեռնասուն Ստեփանոսի առաջին հիշատակարանում, որը գրվել է 1355 թ. օգոստոսի 4-ին, Կիրակոսը դեռ ողջ է, քանզի նրանց ուսուցչի՝ Կիրակոս բաբունապետի մահվան մասին խոսք չկա: Եթե երկրորդ ձեռագիրը գրվել է 1356 թ. մարտ ամսին, ապա նոյեմբեր ամիսը սպանալու համար պետք է մի քանի ամիս եւ գնալ: Հետեւաբար, Կիրակոս Երզնկացին մահացել է 1355 թ. նոյեմբերի 15-ին, առաջացած տարիքում: Եթե մեր կարծիքը ճիշտ է նրա ծննդյան տարեթվի հարցում, ապա կստացվի, որ Կիրակոսը ծնվել է 1275 թ. եւ մահկանացուն կնքել 1355 թ.՝ 80 տարեկանում:

Մեկ այլ խնդիր է նաեւ, թե որտե՞ղ է թաղված մեծանուն այս վարդապետը: Ըստ Հակոբ Կարնեցու (ԺԷ. դ.) վկայության՝ Երզնկայում կա հինգ եկեղեցի, որտեղ «է դամբարան սրբոց վարդապետացն Յոհաննէս Պոլուզին, որ «Լուսաւորչին անձինքն» է ասացեալ, եւ Կիրակոս վարդապետին, որ «Արեւելքն» է ասացեալ»[82]: Հիմք ընդունելով այս վկայությունը՝ ուսումնասիրողների մեծ մասը կարծիք է հայտնել, որ Կիրակոս Երզնկացին թաղվել է Երզնկայի Ս. Սարգիս Եկեղեցու մեջ, չնայած Հակոբ Կարնեցին չի մասնավորեցնում եկեղեցու անունը: Անդրադառնալով առաջացած շփոթությանը՝ Արմենուհի Սրապյանը նշում է, որ Երզնկայի մասին ձեռագրերում պահպանվել են հատուկ Աշխարհացույցներ, որտեղ նշվում են նաեւ նշանավոր վարդապետների թաղման տեղերը: Նմանատիպ հիշատակարաններից մեկից պարզ է դառնում, որ Կիրակոս բաբունապե-

78 ՄՄ ձեռ. Ձ՚ 3276, ԺԷ. դ., էջ 191ա:

79 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Դ.», կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, էջ 384:

80 Տե՛ս **Նորայր եպս. Պողարեան**, Հայ գրողներ Ե.-ԺԷ. դար, էջ 384:

81 **Գառնիկ Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 166, 261:

82 **Յակոբ Կարնեցի**, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 12, «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 551:

փը թաղվել է Երկանի Ս. Գեւորգ եկեղեցու փարաձքում. «...եւ Ս. Գէորգ, որ Երկանի վանք ասի, եւ է Բ. եկեղեցի՝ մինն Ս. Գէորգ, եւ միւսն՝ Ս. Աստուածածին, եւ ԻԴ. գերեզման կա վարդապետաց՝ մինն Կիրակոս Եզնկացին, որ «Արեւելք» շարականն ասաց»[83]:

Այսպիսով, ներկայումս մեր ունեցած սկզբնաղբյուրների հիման վրա ամբողջանում է ԺԳ.-ԺԴ. դդ. կարկառուն ազգային-եկեղեցական գործչի եւ Երզնկայի դպրոցի բարունապետներից՝ Կիրակոս Երզնկացու կենսագրությունն ու գործունեությունը. մտավորական մի հոգեւորականի, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է Աստծո խոսքի քարոզությանն ու մատաղ սերնդի դաստիարակությանը՝ միշտ նախանձախնդիր լինելով Հայոց Եկեղեցու ուղղափառ դավանության պահպանմանն ու ջատագովությանը:

Աստվածաբան, իմաստասեր, գեղագետ, մանկավարժ, ձեռագրերի գրիչ կամ պատվիրատու այս բարունապետը, չնայած ժամանակի դժվարություններին, թշնամու կողմից երկրին հասած պատուհասներին ու դժնդակ օրերին, երբեք չի ընկճվել եւ չի դադարել արարելուց, քանզի մշտապես ապավինել է Տիրոջ ողորմածությանը եւ հավատացել ի վերուստ իրեն վերապահված առաքելությանը՝ սերունդ կրթել եւ մշտամնա արժեքներ փոխանցել աշակերտներին: Լայնախոհ եւ հասարակության լայն շրջանակների առաջ բաց լինելու շնորհիվ նա շահել եւ գրավել է շատերի սրտերը, որոնք նրա անձի մեջ առաջին հերթին տեսել են հոգեւոր հորն ու նախանձախնդիր հայ մարդուն: Նրա խոսքն առավել գործ է, իսկ հավատքը՝ կենդանի գործերով վկայված ու ամրագրված: Միով բանիվ՝ Կիրակոս Երզնկացին իր գործունեությամբ եւ մատենագրական ժառանգությամբ այն հեղինակն է եւ բարունապետը, որն արժանի է հարգանքի եւ մեծարման, իսկ նրա աշխատությունները՝ համակողմանի ուսումնասիրության եւ արժեւորման:

83 ՄՄ ձեռ. ՀՄ 8727, ԺԷ դ., Ժողովածու, էջ 433բ, **Արմենուհի Սրապեան**, Կիրակոս Երզնկացի. բանասիրական ճշգրտումներ, էջ 200: